ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան «13» մայիսի 2022թ.
Ժամը՝ 16:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում է՝

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

Տեղեկատվություն՝ գնման ընթացակարգի մասով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձ) 2022թ. մայիսի 6-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/62 որոշումը www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում (այսուհետ՝ տեղեկագիր) հրապարակվելուց հետո ընթացակարգը շարունակելու մասին.

Գնահատող հանձնաժողովի 2022թ. ապրիլի 11-ի թիվ 3 որոշման հիման վրա ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման արդյունքներով տեղեկագրում ինքնաշխատ կերպով հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ eauction.armeps.am համակարգի կողմից անգործության ժամկետի ավարտ է սահմանվել 2022թ. ապրիլի 21-ը ներառյալ:

2022թ. ապրիլի 14-ին տեղեկագրում հրապարակվել է հայտարարություն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ: 2022թ. մայիսի 11-ին տեղեկագրում հրապարակվել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ բողոքներ քննող անձի 2022թ. մայիսի 6-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/62 որոշումը, որով ամբողջությամբ մերժվել է ներկայացված բողոքը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասը, որով սահմանված է, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց շարունակել գնման ընթացակարգը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ անգործության ժամկետի ավարտ սահմանելով 2022թ. մայիսի 21-ը ներառյալ (գնման ընթացակարգի կասեցմամբ պայմանավորված անգործության ժամկետի մնացած օրերի մասով),
- սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝ _____ Արթուր Ասատրյան

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան